



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ  
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ  
БЮЛЛЕТЕНЬ

№ 10

# ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում  
գետեղված տեղեկությունները  
համարվում են հրապարակված 2010 թվականի հոկտեմբերի 25-ից

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

|  |               |
|--|---------------|
| ԳՅՈՒՏԵՐ .....  | 4, 51         |
| <i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....</i>                                     | <i>6, 53</i>  |
| <br>   |               |
| ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ .....   | 9, 56         |
| <i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին .....</i>                                     | <i>11, 58</i> |
| <br>   |               |
| ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....  | 12, 59        |
| <i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին .....</i>                    | <i>14, 61</i> |
| <br>   |               |
| ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ .....   | 16            |
| <i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին .....</i>             | <i>18</i>     |
| <br>   |               |
| <i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին .....</i> | <i>44</i>     |
| <br>   |               |
| ՑՈՒՑԻՉՆԵՐ .....  | 45            |
| <br>   |               |
| ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....  | 47            |
| <br>   |               |
| ԵՐԿՏԱՌ ԿՈԴԵՐԸ .....  | 62            |

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3  
Հեռ. 563-258 հայտերի ընդունման բաժին  
Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3  
Тел. (374 10) 563-258 отдел приема заявок  
Тел. (374 10) 561-126 отдел информационно-технологического обеспечения

## СОДЕРЖАНИЕ

|  |        |
|--|--------|
| ИЗОБРЕТЕНИЯ.....   | 4, 51  |
| Сведения о выданных патентах.....  | 6, 53  |
| ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....   | 9, 56  |
| Сведения о выданных патентах.....  | 11, 58 |
| ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....  | 12, 59 |
| Сведения о зарегистрированных<br>промышленных образцах.....                  | 14, 61 |
| ТОВАРНЫЕ ЗНАКИ.....  | 16     |
| Сведения о зарегистрированных<br>товарных знаках и знаках обслуживания ..... | 18     |
| Сведения о продлении действия<br>регистрации товарных знаков.....            | 44     |
| УКАЗАТЕЛИ.....   | 45     |
| СООБЩЕНИЯ.....   | 47     |
| ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....   | 62     |

## CONTENTS

|   |        |
|---|--------|
| INVENTIONS.....   | 4, 51  |
| Information on granted patents.....                                 | 6, 53  |
| UTILITY MODELS.....   | 9, 56  |
| Information on granted patents.....                                 | 11, 58 |
| INDUSTRIAL DESIGNS.....   | 12, 59 |
| Information on registered<br>industrial designs.....                | 14, 61 |
| TRADE MARKS.....  | 16     |
| Information on registered trade<br>marks and service marks .....    | 18     |
| Information on renewal of effect<br>of trademark registration ..... | 44     |
| INDEXES.....  | 45     |
| REPORTS.....  | 47     |
| TWO-LETTER CODES.....   | 62     |

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

- 11 արտոնագրի համարը
- 13 փաստաթղթի տեսակի կոդը  
A գյուտի արտոնագիր  
B արտոնագրառունակության մասին եզրակացություն
- 21 հայտի համարը
- 22 հայտի ներկայացման թվականը
- 23 ցուցահանդեսային առաջնության թվականը
- 31 առաջին հայտի համարը
- 32 առաջին հայտի ներկայացման թվականը
- 33 երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
- 45 գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
- 51 միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
- 54 գյուտի անվանումը
- 56 տեղեկատվության աղբյուրներ
- 57 գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
- 62 ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
- 71 հայտատուն, երկրի կոդը
- 72 գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը
- 73 արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
- 74 արտոնագրային հավատարմատար
- 85 միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը
- 86 միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
- 87 միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

### Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **(2009)** (11) **2452** (13) **A**  
**A01B 39/00**  
 (21) **AM20090029** (22) **08.04.2009**  
 (45) 25.10.2010  
 (71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)  
 (72) Արշալույս Պողոսի Թարվերդյան (AM), Դանիել Պետրոսի Պետրոսյան (AM), Շավարշ Մացակի Գրիգորյան (AM), Ժյուլվեռն Մկրտիչի Մկրտչյան (AM), Գոռ Վազգենի Թորոսյան (AM)  
 (73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)  
 (54) **Այգեբաց մեքենայի բանվորական օրգան**  
 (57) Գյուտը վերաբերում է այգեբաց մեքենաներին և հարմարանքներին և նախատեսված է ձեռքով թաղված խաղողի վազերի լրիվ բացման համար, կարող է օգտագործվել նաև գյուղատնտեսության այլ բնագավառներում:

Այգեբաց մեքենայի բանվորական օրգանը բաղկացած է պտտման առանցքի վրա ազատ տեղակայված ստորին սկավառակից և նրա վրա տեղակայված հարկադրաբար պտտվող սկավառակից, որը կոշտ միացված է լիսեռին: Վերին սկավառակը կազմված է մեկ հարթ և տարբեր անկյունների թեքություն ունեցող կոնական երկու միաձույլ մակերևույթներից: Կոնական մակերևույթների թեքման անկյունները ընտրված են այնպես, որ վազի թևերը և ճյուղերը հնարավորություն ունենան սահել առաջին մակերևույթով դեպի վեր, իսկ երկրորդի վրայով ոչ՝ ապահովելով վազի տարրերի տեղաշարժը դեպի ծածկաթմբի կենտրոն:

Ապահովվում է խաղողի վազերի լրիվ բացումը մեքենայի մեկ անցումով, բացառվում են վազին հասցվող մեխանիկական վնասվածքները, 1 նկ.:

(51) **(2009)** (11) **2453** (13) **A**  
**A01B 39/00**  
 (21) **AM20090028** (22) **08.04.2009**  
 (45) 25.10.2010  
 (71) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Արշալույս Պողոսի Թարվերդյան (AM), Դանիել Պետրոսի Պետրոսյան (AM), Շավարշ Մացակի Գրիգորյան (AM), Ժյուլվեռն Մկրտիչի Մկրտչյան (AM), Ալբերտ Սուրենի Գրիգորյան (AM)  
 (73) «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 74 (AM)  
 (54) **Խաղողի այգու միջվազային տարածությունների մշակման բանվորական օրգան**  
 (57) Գյուտը վերաբերում է հողի մշակման մեքենաներին, նախատեսված է խաղողի այգիների միջվազային տարածությունների մշակման համար և կարող է օգտագործվել գյուղատնտեսության այլ բնագավառներում:

Բանվորական օրգանը բաղկացած է բանվորական անիվից՝ իր փխրեցնող դանակներով, պաշտպանիչ անիվից, քառօղակ մեխանիզմից՝ իր կարգավորիչ զսպանակով: Բանող անիվը տեղակայված է պաշտպանիչ անիվի ներսում, իսկ կարգավորիչ զսպանակը տեղադրված է քառօղակ մեխանիզմի վերին մասում՝ վերջինիս երկայնական առանցքի նկատմամբ անկյան տակ:

Ապահովվում է խաղողի այգիների միջվազային տարածությունների հողի փխրեցումը և մոլախոտերի ոչնչացումն առանց վազերին վնաս պատճառելու, 2 նկ.:

(51) **(2009)** (11) **2454** (13) **A**  
**A01G 7/04**  
 (21) **AM20090022** (22) **31.03.2009**  
 (45) 25.10.2010  
 (71) «Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ (AM)  
 (72) Սիներիկ Ներսեսի Հայրապետյան (AM), Դիանա Կարենի Երիցփոխյան (AM)  
 (73) «Բժշկակենսաբանական միջազգային հետբուհական ուսումնական կենտրոն» ՊՈԱԿ, 0040, Երևան, Աճառյան 31 (AM)  
 (54) **Հացահատիկային բույսերի սերմերի ծրունակության և աճի խթանման եղանակ**  
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ հացահատիկային բույսերի ցանված սերմերի մշակմանը:

Ըստ եղանակի ցանված սերմերը ջրում են ջրով, որը մշակում են գերցածր հաճախության էլեկտրամագնիսական դաշտով (էԴՄ): ԷԴՄ-ի հաճախությունը պահպանում են 15 Հց, ինտենսիվությունը՝ 2,5 մՏ: Սերմերի ծյման ժամանակաշրջանում օդի ջերմաստիճանը պահպանում են 12° – 14° C:

Բարձրացվում է հացահատիկային բույսերի սերմերի ծլունակությունը և խթանվում է բույսերի աճը, 2 նկ.:

- (51) (2009) (11) 2455 (13) A  
A23B 7/00
- (21) AM20090023 (22) 31.03.2009  
(45) 25.10.2010
- (71) Հակոբ Կարապետի Բարսեղյան (AM), Լուսինե Հակոբի Բարսեղյան (AM)
- (72) Հակոբ Կարապետի Բարսեղյան (AM)
- (73) Հակոբ Կարապետի Բարսեղյան, Գյումրի, Արագածի 6-րդ թաղամաս 2, բն.11 (AM), Լուսինե Հակոբի Բարսեղյան, 3123, Գյումրի, Արագած 6-րդ թաղամաս, 2, բն. 11 (AM)

**(54) Բուսական հումքից փոշու ստացման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է սննդի արդյունաբերությանը, մասնավորապես՝ բուսական հումքից փոշու ստացման եղանակին:

Բուսական հումքը՝ սև թթենու պտուղները տրորում են, անջատված հյութը առանձնացնում են պտղամսից և կորիզից, որոնք շոգեհարում են 100–105°C ջերմաստիճանում, անջատված հյութը ավելացնում են տրորմամբ անջատված հյութին, այնուհետև շոգեհարում են 50–55°C ջերմաստիճանում 11000–12000 Պա ճնշման ներքո, խտացրած հյութը չորացնում են 135–140°C ջերմաստիճանում՝ մինչև փոշենման վիճակ ստանալը:

Պահպանվում են սև թթի որակական հատկանիշները, 1 նկ.:

- (51) (2009) (11) 2456 (13) A  
B23B 1/00
- (21) AM20090030 (22) 09.04.2009  
(45) 25.10.2010
- (71) Հենրիկ Բուրթելի Բաղդասարյան (AM), Հովհաննես Ավետիսի Հովհաննիսյան (AM)

(72) Հենրիկ Բուրթելի Բաղդասարյան (AM), Հովհաննես Ավետիսի Հովհաննիսյան (AM), Վահե Հենրիկի Բաղդասարյան (AM), Միքայել Թադևոսի Նաջարյան (AM)

(73) Հենրիկ Բաղդասարյան, 0100, Երևան, Ավանի 3-րդ փող. Չարենցի թաղ. 10, բն. 25 (AM), Հովհաննես Ավետիսի Հովհաննիսյան, 0051, Երևան, Արաբկիրի 21 փող.,1, բն.47 (AM)

**(54) Բազմանիստ չարվող կարծրահամահալվածքային թիթեղներով մետաղների մշակման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է կտրմամբ մետաղների մշակմանը:

Բեկյալ նիստեր ունեցող բազմանիստ չարվող կարծրահամահալվածքային թիթեղներով մշակման ընթացքում դրանց բոլոր կտրող եզրերը մաշվելուց հետո գործողության մեջ են դնում թիթեղի բեկյալ նիստերի եզրերը՝ գունավոր մետաղների մաքրատաշ մշակման համար:

Մեծանում է կարծրահամահալվածքային թիթեղների շահագործման ժամկետը, 1 նկ.:

- (51) (2009) (11) 2457 (13) A  
C03C 3/00

(21) AM20090037 (22) 18.04.2009  
(45) 25.10.2010

(71) «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ (AM)

(72) Մարտուն Ռաֆաելի Հովհաննիսյան (AM), Ռաֆաել Մխիթարի Հովհաննիսյան (AM), Նիկոլայ Բաբկենի Կնյազյան (AM)

(73) «Նյութաբանության գիտահետազոտական և արտադրական ձեռնարկություն» ՓԲԸ, 0025, Երևան, Չարենցի 17 (AM)

**(54) Դյուրահալ ապակի**

(57) Գյուտը վերաբերում է կապար չաբարունակող դյուրահալ ապակիների բաղադրակազմին, որոնք կարող են կիրառվել կոնդենսատորների արտադրությունում և այլ բնագավառներում:

Դյուրահալ ապակին ներառում է հետևյալ բաղադրամասերը, մոլ. % . տելուրի օքսիդ՝ 45.0–70.0, մոլիբդենի օքսիդ՝ 24.0–45.0, ցինկի օքսիդ՝ 1.0–9.95, բիսմութի օքսիդ՝ 0.01–3.0, բորի օքսիդ՝ 0.01–5.0, ալյումինի օքսիդ՝ 0.01–3.0, սիլիցիումի օքսիդ՝ 0.01–3.0 և պղնձի օքսիդ՝ 0.01–2.0:

Նվազեցվում է ապակու բյուրեղացման նկատմամբ հակվածությունը, կապակցման և թրջման ջերմաստիճանը:

(51) (2009) (11) 2458 (13) A  
**F03D 9/00**  
 (21) **AM20100071** (22) **04.06.2010**  
 (45) **25.10.2010**  
 (71) Ռաֆիկ Վարդգեսի Մուրադյան (RU,) Ռուլանդ Վարդգեսի Մուրադյան (AM)  
 (72) Ռաֆիկ Վարդգեսի Մուրադյան (RU), Ռուլանդ Վարդգեսի Մուրադյան (AM)  
 (73) Ռաֆիկ Վարդգեսի Մուրադյան, 141075, Մոսկովսկայա օբլ., Կորոլյով, Միչուրինի 27, կորպ.4, բն.40 (RU), Ռուլանդ Վարդգեսի Մուրադյան, 3105, Գյումրի, Տեր-Գաբրիելյան 4 (AM)  
 (54) **Հոսող միջավայրի հոսքի էներգիայի ձևափոխման եղանակ**  
 (57) Գյուտը վերաբերում է հիդրոէներգետիկային:

Ըստ եղանակի ստեղծում են անսահմանափակ քանակությամբ երկրորդական մրկահոսքերի գեներացման հնարավորություն: Բոլոր երկրորդական մրկահոսքերի պատման առանցքները համընկնում են հոսքի կենտրոնական առանցքի հետ և հոսող միջավայրի հոսքի հետ պատվում են միևնույն ուղղությամբ: Հոսքը ջրավազանում շարժումը սկսում է իրականացնել սակավ ջրի պայմաններում, իսկ այնուհետև անցնում է ջրապտույտի դաշտ, որտեղ և առաջանում է ինքնագեներացման ուժ: Հոսող միջավայրի հոսքի առաջացումը ապահովվում է ջրապտույտի դաշտի ազդեցության և ջրավազանի աշխարհագրական դասավորության շնորհիվ: Անհրաժեշտ է ապահովել նաև ջրավազանի երկրաչափական պարամետրերի խստիվ համապատասխանությունը մուտքային հոսքի պարամետրերի հետ, ընդ որում պարամետրերի համապատասխանությունը ապահովվում է մուտքային հոսքի կուտակումով:

Նվազեցվում են հոսքի էներգիայի ձևափոխման կորուստները, 2 նկ.:

(51) (2009) (11) 2459 (13) A  
**F26B 3/00**  
**F26B 3/02**  
 (21) **AM20090042** (22) **21.04.2009**  
 (45) 25.10.2010  
 (71) Արուսյակ Ռաֆիկի Հակոբյան (AM)  
 (72) Արսեն Ալբերտի Հակոբյան (AM), Արուսյակ Ռաֆիկի Հակոբյան (AM), Սանդրո Սեդրակի Աբովյան (AM)  
 (73) Արուսյակ Ռաֆիկի Հակոբյան, 0037, Երևան, Արաբկիրի 51-րդ փող. 9, բն.118 (AM)  
 (54) **Չորացման տեղակայանք**  
 (57) Գյուտը վերաբերում է գյուղատնտեսությանը, մասնավորապես՝ մրգերի և բանջարեղենի համար նախատեսված արևային և արհեստական չորանոցներին:

Այն կարող է օգտագործվել սննդի և նրան հարակից այլ արդյունաբերություններում:

Չորացման տեղակայանքն ունի չորացման խուց, որում տեղակայված են հումքի չորացման համար նախատեսված ցանցերը: Խուցը ծածկված է թեքություն ունեցող լուսաթափանցիկ ծածկով, խցի վերին մասում տեղակայված է օդի արտաթողման խողովակ: Խուցը կազմված է երկու մասից, որոնք իրարից բաժանված են շարժական դռներով, խուցի երկրորդ մասի ներքևում տեղակայված է օդատաքացուցիչին միացված անցքավոր օդատարը: Օդատաքացուցիչը պաշտպանված է ծածկով, որի վերին մասում տեղակայված է ծխնելույզը:

Բարելավվում են տեղակայանքի ջերմատեխնիկական բնութագրերը, կրճատվում է չորացման տևողությունը, 1 նկ.:



**ՕԳՏԱԿԱՐ  
ՄՈԴԵԼՆԵՐ**

**Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի**

|    |   |
|----|---|
| 11 | արտոնագրի համարը  |
| 13 | փաստաթղթի տեսակի կոդը<br>U օգտակար մոդելի արտոնագիր                                 |
| 21 | հայտի համարը  |
| 22 | հայտի ներկայացման թվականը   |
| 23 | ցուցահանդեսային առաջնության թվականը   |
| 31 | առաջին հայտի համարը   |
| 32 | առաջին հայտի ներկայացման թվականը  |
| 33 | երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը  |
| 45 | օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը           |
| 51 | միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)                             |
| 54 | օգտակար մոդելի անվանումը  |
| 56 | տեղեկատվության աղբյուրներ   |
| 57 | օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը                                 |
| 62 | ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը |
| 71 | հայտատուն, երկրի կոդը   |
| 72 | օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը  |
| 73 | արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը   |
| 74 | արտոնագրային հավատարմատար   |
| 85 | միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը                               |
| 86 | միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը                                 |
| 87 | միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը                                 |

## Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

- (51) (2009) (11) 208(13) Ս  
**B65D 1/00**  
**A45C 11/00**
- (21) **AM20100088U** (22) **02.07.2010**  
 (45) 25.10.2010  
 (71) «Մեծ Սյունիք» ՓԲԸ (AM)  
 (72) Վազգեն Մաթևոսյան (AM)  
 (73) «Մեծ Սյունիք» ՓԲԸ, 0009, Երևան, Տերյան 52/37 (AM)  
 (54) **Հուշանվերային պատյան խմիչքով շշի համար**  
 (57) Օգտակար մոդելը վերաբերում է հուշանվերային պատյաններին, որոնք նախատեսված են խմիչքով (գինի, կոնյակ և այլն) լցված շշերի համար:  
 Պատյանն ունի փայտե հատակային մաս և փայտե սնամեջ իրան, որի մեջ տեղակայված է շիշը: Պատյանի իրանը պատրաստված է փայտի մեկ կտորից:  
 Իրանը կիպ ընդգրկում է շիշը: Պատյանի հատակային մասի տրամագիծը հավասար է իրանի ստորին մասի ներքին տրամագծին: Իրանի վերին մասը կատարված է համահավասար շշի խցանին և պատված է կնքամոմով: Պատյանի արտաքին մակերևույթի վրա լազերային եղանակով փորագրված են տեղեկություններ խմիչքի և դրա արտադրողի մասին:  
 Ընդլայնվում է խմիչքով շշերի համար նախատեսված հուշանվերային պատյանների տեսականին, 2 նկ.:
- 
- (51) (2009) (11) 209(13) Ս  
**E04G 7/00**
- (21) **AM20100096U** (22) **21.07.2010**  
 (45) 25.10.2010  
 (71) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

- (72) Գագիկ Աղաբեգի Գալստյան (AM), Վալտեր Աշոտի Աթանեսյան (AM), Արմեն Մարտինի Սիմոնյան (AM), Աննա Արտավազդի Խաչատրյան (AM)  
 (73) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)  
 (54) **Լաստակ-փայտամած շինարարական աշխատանքների համար**  
 (57) Լաստակ-փայտամածն ունի ուղղաձիգ և հորիզոնական մասերից կազմված կրող տարրեր, անկյունագծային և հորիզոնական կապեր, հենաթաթեր: Կրող տարրերը Դ-աձև են: Դրանց ուղղաձիգ և հորիզոնական մասերը վանդակավոր են, կազմված են մեկ զույգ խողովակներից, որոնք միակցված են ձողիկներով: Տարրերի հորիզոնական մասն ունի իր ազատ ծայրում ամրակցված, հարակից կրող տարրի ուղղաձիգ մասն ընդգրկող խողովակառոտ: Անկյունագծային կապերը և հենաթաթերն ամրակցված են միմյանց: Անկյունագծային կապերը միմյանց հետ հատման տեղում կապված են բռնակի միջոցով: Անկյունագծային կապերից մեկն իր ծայրային խողովակներով ընդգրկում է առաջին երկու կրող տարրերի ուղղաձիգ մասերը, իսկ մյուսն իր խողովակներով տեղակայված է առաջին երկու կրող տարրերի հորիզոնական մասի խողովակառոտի մեջ: Հորիզոնական կապերի ծայրերից մեկի խողովակն ընդգրկում է վերջին երկու կրող տարրերի ուղղաձիգ մասը, իսկ ծայրերից մյուսի խողովակը տեղակայված է վերջին երկու կրող տարրերի հորիզոնական մասի խողովակառոտի մեջ:  
 Բարձրացվում են լաստակ-փայտամածի կայունությունը և համապիտանիությունը ծածկերի պատրաստման և պատերի հարդարման աշխատանքներում, 2 նկ.:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ

ՆՄՈՒՇՆԵՐ

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող  
մատենագիտական տվյալների նույնականացման  
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

|           |   |
|-----------|---|
| <b>11</b> | <b>վկայագրի համարը</b>  |
| <b>13</b> | <b>փաստաթղթի տեսակի կոդը</b><br><b>S արդյունաբերական նմուշի վկայագիր</b>          |
| <b>21</b> | <b>հայտի համարը</b>   |
| <b>22</b> | <b>հայտի ստացման թվականը</b>  |
| <b>23</b> | <b>ցուցահանդեսային առաջնության թվականը</b>  |
| <b>24</b> | <b>գրանցման թվականը</b>   |
| <b>31</b> | <b>առաջնային հայտի համարը</b>   |
| <b>32</b> | <b>առաջնային հայտի ներկայացման թվականը</b>  |
| <b>33</b> | <b>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը</b>                            |
| <b>51</b> | <b>արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման<br/>(ԱՆՄԴ) ցուցիչը (ները)</b> |
| <b>54</b> | <b>արդյունաբերական նմուշի անվանումը</b>   |
| <b>55</b> | <b>արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)</b>                      |
| <b>71</b> | <b>հայտատուն(ները), երկրի կոդը</b>  |
| <b>72</b> | <b>հեղինակը(ները), երկրի կոդը</b>   |
| <b>73</b> | <b>իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը</b>   |
| <b>74</b> | <b>արտոնագրային հավատարմատար</b>  |

### Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

(51) 09-07 (11) 235 (13) S  
 (21) 20100005 (22) 05.03.2010  
 (31) 2009502816 (32) 13.10.2009 (33) RU  
 (71) Փրայորիթի Քլաբ Ինք. (VG)  
 (72) Ստրելցց Անդրեյ Վասիլիի (RU)  
 (73) Փրայորիթի Քլաբ Ինք. (VG)  
 (74) Հ. Դավթյան  
 (54) **Շշի խցանման միջոց (2 տարբերակ)**  
 (55)



տարբերակ 1, պատկեր 5



Տարբերակ 1, պատկեր 1



տարբերակ 2, պատկեր 1



տարբերակ 1, պատկեր 2



տարբերակ 2, պատկեր 2



տարբերակ 1, պատկեր 3



տարբերակ 2, պատկեր 3



տարբերակ 1, պատկեր 4



տարբերակ 2, պատկեր 4

- (51) 14-02 (11) 236(13) S
- (21) 20100006 (22) 25.05.2010
- (71) «Վի Էյ Մաքսմորբայլ» ՍՊԸ (AM)
- (72) Վահրիճ Ավետիսյան (AM)
- (73) «Վի Էյ Մաքսմորբայլ» ՍՊԸ (AM)
- (74) Ա. Գալոյան
- (54) Վճարման տերմինալ
- (55)



Տարբերակ 1, պատկեր 1



տարբերակ 1, պատկեր 2



տարբերակ 1, պատկեր 3

**ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ**

**ТОВАРНЫЕ ЗНАКИ**



**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող  
մատենագիտական տվյալների նույնականացման  
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

|     |   |
|-----|---|
| 111 | գրանցման հերթական համարը                                |
| 151 | գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)           |
| 152 | թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է                   |
| 181 | գրանցման գործողության ենթադրյալ ավարտը                  |
| 210 | հայտի համարը  |
| 220 | հայտի ներկայացման թվականը                               |
| 230 | ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը             |
| 310 | առաջին հայտի համարը                                     |
| 320 | կոնվենցիայով առաջնության թվականը                        |
| 330 | երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը            |
| 511 | ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը               |
| 526 | չպահպանվող տարրեր                                       |
| 540 | ապրանքային նշանը  |
| 551 | կոլեկտիվ կամ հավաստագրային նշան                         |
| 554 | ծավալային նշան  |
| 555 | հոլոգրաֆիական նշան                                      |
| 556 | ձայնային նշան   |
| 591 | գույնը և գունային համակցությունը                        |
| 646 | իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը |
| 732 | նշանի սեփականատերը, հասցեն, երկրի կոդը                  |
| 740 | արտոնագրային հավատարմատար                               |

## Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) **20091002** (111) **15986**  
 (220) **19.08.2009** (151) **01.09.2010**  
 (181) **19.08.2019**  
 (732) «Դինամիկ սիստեմ» ՍՊԸ, Երևան, Վարշավյան 47/1, AM  
 (540)



(591) Նշանը պահպանվում է սպիտակ և կանաչ գունային համակցությամբ:  
 (511)  
 դաս 35. գովազդային վահանակների պատրաստում և տեղադրում:

(210) **20100258** (111) **15987**  
 (220) **25.02.2010** (151) **01.09.2010**  
 (181) **25.02.2020**  
 (732) «Լայֆ ինֆո» ՍՊԸ, Երևան, Ամիրյան 11, AM  
 (540)



**ԼԱՅՏԻՎՏԵՄ**



**ԼԱԻՖՑԻՏԵՄ**



**LIFESYSTEM**

(511)  
 դաս 38. բնակչությանը առօրյա հարցերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրում:

(210) **20100397** (111) **15988**  
 (220) **19.03.2010** (151) **01.09.2010**  
 (181) **19.03.2020**  
 (732) Սի.Ար. Բարդ, Ինք., US  
 (540)

**BARD**

(511)  
 դաս 10. բժշկական սարքեր և սարքավորումներ:  
 (740) Ալ. Նահապետյան

(210) **20100435** (111) **15989**  
 (220) **26.03.2010** (151) **01.09.2010**  
 (181) **26.03.2020**  
 (732) Ջենզիմ Քորփորեյշն, Մասաչուսեթսի նահանգ, US  
 (540)

**RenVela**

(511)  
 դաս 5. ֆոսֆատային վիրակապեր հիպերֆոսֆատեմիայի բուժման համար:  
 (740) Ալ. Նահապետյան

(210) **20100544** (111) **15990**  
 (220) **08.04.2010** (151) **01.09.2010**  
 (181) **08.04.2020**  
 (732) «Երևան-կաթ» ՍՊԸ, Երևան, գյուղ Հաղթանակ, 1-ին փող., AM  
 (540)



(591) Նշանը պահպանվում է շագանակագույն, դեղին, սպիտակ, սև և կապույտ գունային համակցությամբ:

(511) դաս 30. պաղպաղակ:

(210) **20100545** (111) **15991**  
 (220) **08.04.2010** (151) **01.09.2010**  
 (181) **08.04.2020**

(732) «Երևան-կաթ» ՍՊԸ, Երևան, գյուղ Հաղթանակ, 1-ին փող., AM  
 (540)

## Ֆրուտմարի

(511) դաս 30. պաղպաղակ:

(210) **20100546** (111) **15992**  
 (220) **08.04.2010** (151) **01.09.2010**  
 (181) **08.04.2020**

(732) «Երևան-կաթ» ՍՊԸ, Երևան, գյուղ Հաղթանակ, 1-ին փող., AM  
 (540)

## Բոնմարի

(511) դաս 30. պաղպաղակ:

(210) **20100547** (111) **15993**  
 (220) **08.04.2010** (151) **01.09.2010**  
 (181) **08.04.2020**

(732) «Երևան-կաթ» ՍՊԸ, Երևան, գյուղ Հաղթանակ, 1-ին փող., AM  
 (540)

## Շոկմարի

(511) դաս 30. պաղպաղակ:

(210) **20100580** (111) **15994**  
 (220) **19.04.2010** (151) **01.09.2010**  
 (181) **19.04.2020**

(732) «Սիկոնե» ՍՊԸ, Արարատի մարզ, գյուղ Մրգանուշ, AM  
 (540)



(511) դաս 5. հիգիենիկ միջոցներ, կանացի հիգիենիկ միջոցներ, մեծահասակների տակդիրներ.

դաս 16. թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կաշուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ. մեծ, փոքր, միջին տուփերով և պլիեթիլենային թաղանթով անձեռոցիկներ, գրպանի թղթա անձեռոցիկներ, մանկական տակդիրներ:

(210) **20100581** (111) **15995**  
 (220) **19.04.2010** (151) **01.09.2010**  
 (181) **19.04.2020**

(732) «Սիկոնե» ՍՊԸ, Արարատի մարզ, գյուղ Մրգանուշ, AM  
 (540)



(511)

դաս 5. հիգիենիկ միջոցներ, կանացի հիգիենիկ միջոցներ, մեծահասակների տակդիրներ.

դաս 16. թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կպչուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիներ. գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ. մեծ, փոքր, միջին տուփերով և պոլիէթիլենային թաղանթով անձեռոցիկներ, գրպանի թղթյա անձեռոցիկներ, մանկական տակդիրներ:

(210) 20100611

(220) 26.04.2010

(732) «Անարան» ՍՊԸ, Հրազդան, Միկրոշրջան, տուն 111, AM

(540)



(591) Նշանը պահպանվում է կարմիր, երկնագույն, կանաչ, սպիտակ, դեղին, մոխրագույն և սև գունային համակցությամբ:

(511)

դաս 29. կաթ, կաթնամթերք:

(210) 20100647

(220) 03.05.2010

(732) «Բումերանգ սոփթուեր» ՍՊԸ, Երևան, Սարյան 3, AM

(540)



(591) Նշանը պահպանվում է կարմիր, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511)

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ, այդ թվում՝ խորհրդատվություն գործարարության կառավարման վերաբերյալ, համակարգչային ֆայլերում տեղեկատվության որոնում (երրորդ անձանց համար), տվյալների համակարգչային բազաներից տեղեկատվության հավաքագրում, տվյալների համակարգչային բազաներում տեղեկատվության համակարգում, փաստաթղթերի վերարտադրություն, շուկայի ուսումնասիրություն, համակարգչային ցանցում օնլայն գովազդ, լուսապատճենահանում, մանրածախ առևտրի նպատակով բոլոր զանգվածային տեղեկատվության միջոցներում ապրանքների ներկայացում, ապրանքների խթանում (երրորդ անձանց համար).

դաս 38. հեռահաղորդակցություն, այդ թվում՝ հեռահաղորդակցական ծառայություններ, հաղորդակցության միջավայր, ինտերնետում բանավեճերի ձևերի ապահովում, համակարգչային տերմինալների օգտագործմամբ կապի ապահովում, տվյալների բազաներ մուտքի ապահովում, համակարգչի օգտագործմամբ հաղորդագրությունների և պատկերների փոխանցում.

դաս 42. գիտական և տեխնոլոգիական ծառայություններ և հետազոտություններ և դրանց

հետ կապված մշակումներ. արդյունաբերական վերլուծումներ և հետազոտություններ. համակարգչային ապարատների և ծրագրերի մշակում և կատարելագործում, այդ թվում՝ համակարգչային ծրագրավորում, համակարգչային ապարատային ապահովում և այդ բնագավառում խորհրդատվություն, համակարգչային ծրագրային ապահովման մշակում և կատարելագործում, համակարգչային ծրագրերի տեղակայում, համակարգչային ծրագրային ապահովման տեխնիկական սպասարկում, համակարգչային ծրագրային ապահովման արդիականացում, համակարգչային համակարգերի մշակում և կատարելագործում, համակարգչային համակարգերի վերլուծություն, վիրուսներից համակարգչային տեղեկատվական համակարգերի պաշտպանություն, վեբ-կայքերի տեղակայում (վեբ-կայքեր), ծրագրային ապահովման մշակում և կատարելագործում:  
(740) Ալ. Նահապետյան

հաղորդակցության միջավայր, ինտերնետում բանավեճերի ձևերի ապահովում, համակարգչային տերմինալների օգտագործմամբ կապի ապահովում, տվյալների բազաներ մուտքի ապահովում, համաշխարհային համակարգչային ցանց մուտքի ապահովում, համակարգչի օգտագործմամբ հաղորդագրությունների և պատկերների փոխանցում.

դաս 40. նյութերի մշակում, այդ թվում՝ օֆսետային տպագրություն, նկարների տպում, ֆոտոկոմպոզիցիաների կազմում, լուսանկարների տպում, տպագրություն.

դաս 41. դաստիարակություն (կրթություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում, այդ թվում՝ թվային պատկերների ստեղծում, զվարճությունների հարցերով տեղեկատվություն, շարժական գրադարանների ծառայություններ, ֆոտոռեպրոդուկցիաներ, լուսանկարչություն:  
(740) Ալ. Նահապետյան

(210) **20100648** (111) **15998**  
(220) **03.05.2010** (151) **01.09.2010**  
(181) **03.05.2020**

(732) «Բումերանգ սոլթուեր» ՍՊԸ, Երևան, Սարյան 3, AM  
(540)

## MobiToWeb

(511)

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ, այդ թվում՝ համակարգչային ֆայլերում տեղեկատվության որոնում (երրորդ անձանց համար), տվյալների համակարգչային բազաներից տեղեկատվության հավաքագրում, տվյալների համակարգչային բազաներում տեղեկատվության համակարգում, համակարգչային ցանցում օնլայն գովազդ, լուսապատճենահանում, մանրածախ առևտրի նպատակով բոլոր զանգվածային տեղեկատվության միջոցներում ապրանքների ներկայացում, ապրանքների խթանում (երրորդ անձանց համար).

դաս 38. հեռահաղորդակցություն, այդ թվում՝ հեռահաղորդակցական ծառայություններ,

(210) **20100650** (111) **15999**  
(220) **03.05.2010** (151) **01.09.2010**  
(181) **03.05.2020**

(732) «Բումերանգ սոլթուեր» ՍՊԸ, Երևան, Սարյան 3, AM  
(540)

## Boomerang

(511)

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ, այդ թվում՝ խորհրդատվություն գործարարության կառավարման վերաբերյալ, համակարգչային ֆայլերում տեղեկատվության որոնում (երրորդ անձանց համար), տվյալների համակարգչային բազաներից տեղեկատվության հավաքագրում, տվյալների համակարգչային բազաներում տեղեկատվության համակարգում, փաստաթղթերի վերարտադրություն, շուկայի ուսումնասիրություն, համակարգչային ցանցում օնլայն գովազդ, լուսապատճենահանում, մանրածախ առևտրի նպատակով բոլոր զանգվածային տեղեկատվության միջոցներում ապրանքների ներկայացում, ապրանքների խթանում (երրորդ անձանց համար).

դաս 38. հեռահաղորդակցություն, այդ թվում՝ հեռահաղորդակցական ծառայություններ, հաղորդակցության միջավայր, ինտերնետում բանավեճերի ձևերի ապահովում, համակարգչային տերմինալների օգտագործմամբ կապի ապահովում, տվյալների բազաներ մուտքի ապահովում, համակարգչի օգտագործմամբ հաղորդագրությունների և պատկերների փոխանցում.

դաս 42. գիտական և տեխնոլոգիական ծառայություններ և հետազոտություններ և դրանց հետ կապված մշակումներ. արդյունաբերական վերլուծումներ և հետազոտություններ. համակարգչային ապարատների և ծրագրերի մշակում և կատարելագործում, այդ թվում՝ համակարգչային ծրագրավորում, համակարգչային ապարատային ապահովում և այդ բնագավառում խորհրդատվություն, համակարգչային ծրագրային ապահովման մշակում և կատարելագործում, համակարգչային ծրագրերի տեղակայում, համակարգչային ծրագրային ապահովման տեխնիկական սպասարկում, համակարգչային ծրագրային ապահովման արդիականացում, համակարգչային համակարգերի մշակում և կատարելագործում, համակարգչային համակարգերի վերլուծություն, վիրուսներից համակարգչային տեղեկատվական համակարգերի պաշտպանություն, վեբ-կայքերի տեղակայում (վեբ-կայքեր), ծրագրային ապահովման մշակում և կատարելագործում:

(740) Ալ. Նահապետյան

(210) **20100690** (111) **16000**  
 (220) **10.05.2010** (151) **01.09.2010**  
 (181) **10.05.2020**

(732) «Արմոս» ՍՊԸ, Երևան, Բրյուսովի 6, AM  
 (540)



**ARYOS**

(511)  
 դաս 25. կոշիկ:

(210) **20100716** (111) **16001**  
 (220) **17.05.2010** (151) **01.09.2010**  
 (181) **17.05.2020**

(732) «Լ և Հ ընկերներ» ՍՊԸ, Երևան, Կոմիտաս 38/1, բն.17, AM  
 (540)



(591) Նշանը պահպանվում է կապույտ, սև և սպիտակ գունային համակցությամբ:

(511)  
 դաս 39. ավիատոմսերի վաճառք և զբոսաշրջություն:

(210) **20090906** (111) **16002**  
 (220) **27.07.2009** (151) **09.09.2010**  
 (181) **27.07.2019**

(732) «Ֆոնդեքս կոմերցիալ» ՍՊԸ, Սյունիքի մարզ, Կապան, Շահումյան 22/25, AM  
 (540)



(511)  
 դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում:

(210) **20091051** (111) **16003**  
 (220) **02.09.2009** (151) **09.09.2010**  
 (181) **02.09.2019**



(732) Բաղդասարյան Էմիլ Գագիկի, Երևան,  
 Էստոնական 14, բն. 37, AM  
 (540)



(511)  
 դաս 16. թուղթ, սովարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կաշուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ:

դաս 25. հագուստ, կոշկեղեն, գլխարկներ:

դաս 35. գովազդ. գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեություն գործարարության ասպարեզում. գրասենյակային ծառայություններ:

դաս 43. սննդամթերքով և ըմպելիքներով ապահովման ծառայություններ. ժամանակավոր բնակատեղով ապահովում:

(210) 20100148 (111) 16004  
 (220) 05.02.2010 (151) 09.09.2010  
 (181) 05.02.2020

(732) Քուայքոմ Ինքորփորեյթիդ , US

(540)  
**QUALCOMM**

(511)  
 դաս 38. հեռահաղորդակցության ծառայություններ, մասնավորապես՝ տվյալների բազաներին և գլոբալ համակարգչային և տեղեկատվական ցանցերին կոլեկտիվ մուտքի տրամադրում օգտվողների համար կապի միջոցների և համակարգիչների միջոցով. ձայնային ազդանշանների, տեսաազդանշանների, պատկերների, հաղորդագրությունների և տվյալների էլեկտրոնային փոխանցում. ֆիլմերի, ֆիլմերի անոնս-ռոլիկների, գովազդի և ձայնա- և տեսաձրագրերի փոխանցում. ձայնային ազդանշանների, տվյալների, պատկերների, ազդանշանների և հաղորդագրությունների թվային փոխանցում. ռադիոհեռախոսային և բջջային կապ. տելեքսային կապ. կապ՝ համակարգչային տերմինալների օգտագործմամբ. հեռագրային կապ. հեռախոսային կապ. ֆաքսի-միլային կապ. փեյջինգային կապ՝ հեռախոսի և(կամ) ռադիոյի օգտագործմամբ. հեռուստահաղորդում. մալուխային հեռուստահաղորդում. ռադիոհաղորդում. տեղեկատվական ծառայություններ կապի միջոցների համար. հեռահաղորդակցության սարքավորումների, այդ թվում՝ հեռախոսային ֆաքսիմիլային ապարատների վարձակալություն և (կամ) վարձով տրամադրում. անլար հաղորդակցության ծառայություններ, ներառյալ՝ ձայնային ազդանշանների և տվյալների փոխանցման ծառայություններ՝ ցամաքային կամ արբանյակային հաղորդակցության համակարգերի օգտագործմամբ. հեռահաղորդակցության ենթակառուցվածքի մուտքի տրամադրում երրորդ անձանց համար.

դաս 41. զվարճությունների հետ կապված ծառայություններ, այն է՝ համակարգչային ձայնա- և տեսաազդանշանների և տվյալների տրամադրում կապի միջոցների և համակարգիչների համար. օնլայն համակարգչային խաղերի տրամադրում հեռահաղորդակցության ցանցերի և համակարգիչների ցանցի միջոցով.

դաս 42. նախագծմանը, փորձարկմանը և արտադրությանը վերաբերող ինժեներական և կոնստրուկտորական ծառայություններ երրորդ անձանց համար, ինչպես նաև աջակցության

ծառայություններ երրորդ անձանց կողմից իրականացվող ցամաքային և արբանյակային կապի համակարգերի և ցանցերի, անլար տեղամիջավայրերի նախագծման, փորձարկման և արտադրության հարցերում. կապի և տեղեկատվության մշակման ցանցերի նախագծման և մշակման պլանավորում երրորդ անձանց համար. խորհրդատվություն, փորձարկում և տեխնիկական վերահսկողություն՝ կապի ցանցերի համար համակարգային ինտեգրման և արտադրանքի ինտեգրման ոլորտում, ինչպես նաև էլեկտրոնային ծառայությունների ոլորտում տվյալների մշակման համար, մասնավորապես՝ տվյալների, պատկերների, տեսա- և ձայնահաջորդականությունների հավաքում, պահում, կերպափոխում, փոխանցում կամ տարածում, և նաև ինտերակտիվ կերպով հաղորդակցվող համակարգչային համակարգերի միջոցով տվյալների բազայում պահվող տեղեկությունների տրամադրման և փոխանցման ոլորտում. տվյալների մշակման ծրագրերի մշակում և ստեղծում, այն է՝ երրորդ անձանց համար համակարգչային ծրագրերի ստեղծում և մշակում. համակարգչային ծառայություններ, մասնավորապես՝ օգտվողների պահանջով հատուկ տեղեկատվության տրամադրում ինտերնետի միջոցով. օնլայն ռեժիմում տեխնիկական աջակցություն համակարգիչների, համակարգչային ծրագրային արտադրանքի և համակարգչային համակարգերի ոլորտում. խորհրդատվություն համակարգիչների և համակարգչային ծրագրային արտադրության ոլորտում. համակարգչային ախտորոշման ծառայություններ. երրորդ անձանց համար համակարգչային ծրագրային արտադրության նորացում. տեխնիկական աջակցություն, այն է՝ համակարգիչների տեխնիկական և ծրագրային խնդիրների որոշում և վերացում. երրորդ անձանց համար օնլայն ռեժիմում համակարգչային ծրագրային արտադրության նորացում ինտերնետի միջոցով. համակարգիչների, համակարգչային ծրագրային արտադրության և համակարգչային համակարգերի ոլորտում տեղեկատվության տրամադրում:

(740) 2. Մանուկյան

(210) **20100150** (111) **16005**  
 (220) **08.02.2010** (151) **09.09.2010**  
 (181) **08.02.2020**

(732) Անհատ ձեռնարկատեր Վարդգես Գաբրիելյան, Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ. 33 շենք, բն. 89, AM  
 (540)



(591) Նշանը պահպանվում է կապույտ և սպիտակ գունային համակցությամբ:  
 (511) դաս 30. աղի-բուլի:

(210) **20100392** (111) **16006**  
 (220) **19.03.2010** (151) **09.09.2010**  
 (181) **19.03.2020**


(732) «Արսանիտ» ՍՊԸ, ք. Մասիս, Երևանյան 110, AM  
 (540)



(511) դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ:

(210) **20100393** (111) **16007**  
 (220) **19.03.2010** (151) **09.09.2010**  
 (181) **19.03.2020**

(732) «Արսանիտ» ՍՊԸ, ք. Մասիս, Երևանյան 110, AM  
 (540)



(511) դաս 5. դեղագործական և անասնաբուժական պատրաստուկներ:



(210) **20100409** (111) **16008**  
 (220) **23.03.2010** (151) **09.09.2010**  
 (181) **23.03.2020**

(732) «Երևանյան կոնյակի տուն» ՍՊԸ, Երևան,  
 Բաղրամյան 23, բն. 1ա, AM

(540)  
**ЯНТАРНАЯ АРМЕНИЯ**

(511)  
 դաս 16. թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կաշուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ.

դաս 33. ալկոհոլային ըմպելիքներ (բացառությամբ գարեջրի), մասնավորապես՝ հայկական կոնյակ(բրենդի), գինիներ, օղի, վիսկի, լիկյորներ, մրգեր պարունակող ալկոհոլային խմիչքներ, սպիրտային էքստրակտներ, սպիրտային էսենցիաներ:

(210) **20100410** (111) **16009**  
 (220) **23.03.2010** (151) **09.09.2010**  
 (181) **23.03.2020**

(732) «Երևանյան կոնյակի տուն» ՍՊԸ, Երևան,  
 Բաղրամյան 23, բն. 1ա, AM

(540)  
**ЯНТАРЬ АРМЕНИИ**

(511)  
 դաս 16. թուղթ, ստվարաթուղթ և դրանցից պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տպագրական արտադրանք. նյութեր կազմարարական աշխատանքների համար. լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ. կաշուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային նպատակների համար. պիտույքներ նկարիչների համար. վրձիններ. գրամեքենաներ և գրասենյակային պիտույքներ (բացառությամբ

կահույքի). ուսուցողական նյութեր և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ սարքավորումների). պլաստմասսայե նյութեր փաթեթավորման համար, որոնք ընդգրկված չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական կլիշեներ.

դաս 33. ալկոհոլային ըմպելիքներ (բացառությամբ գարեջրի), մասնավորապես՝ հայկական կոնյակ(բրենդի), գինիներ, օղի, վիսկի, լիկյորներ, մրգեր պարունակող ալկոհոլային խմիչքներ, սպիրտային էքստրակտներ, սպիրտային էսենցիաներ:

(210) **20100426** (111) **16010**  
 (220) **25.03.2010** (151) **09.09.2010**  
 (181) **25.03.2020**

(732) «Արտաշատ-Վինկոն» ՓԲԸ, Արարատի  
 մարզ, գյուղ Մխչյան, AM

(540)  
**Գուբերնատոր**  
**Gubernator**  
**Губернатор**

(511)  
 դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):

